ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«__»_____2023թ. **N_____-Ա**

ՈՐՈՇՈՒՄ

«ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՐՎԵՍՏԻ ԹԱՆԳԱՐԱՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Հաստատել «Ժամանակակից արվեստի թանգարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության փոփոխությունը՝ համաձայն հավելվածի:

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ»
ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ **ՆՈՒԱՐԴ ՎԱՐԴԱՆՅԱՆ**

«__»_____ 2023թ.
ք. Երևան

Հավելված
Կազմված է «01» դեկտեմբեր 2023թ.
և բաղկացած է 2 թերթից
Տպագրված է ընդամենը 4 օրինակ
Օրինակ ----

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Հայաստանի Հանրապետության
Երևան քաղաքի ավագանու
« »_____2023թ.
N ____ Ա որոշմամբ
Երևանի քաղաքապետ՝
_____ Տ.Ավինյան

ԳՐԱՆՑՎԱԾ Է

Հայաստանի Հանրապետության
իրավաբանական անձանց պետական
ռեգիստրի գործակալության կողմից
«29» դեկտեմբերի 2010թ.
Գրանցման համար՝ 286.210.07797
ՀՎՀՀ՝ 02509933
29.12.2010թ. գրանցված կանոնադրության
թիվ _____փոփոխությունը գրանցված է
իրավաբանական անձանց
պետական ռեգիստրի կողմից
_____ ____ 20___թ.
աշխատակից՝_____

«ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՐՎԵՍՏԻ ԹԱՆԳԱՐԱՆ»

Համայնքային ոչ առևտրային կազմակերպության

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

(փոփոխություն)

Ե Ր Ե Վ Ա Ն 2023թ.

1. «Ժամանակակից արվեստի թանգարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության (այսուհետ՝ Կանոնադրություն) մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1) Կանոնադրության 2.1-ին կետի «ե» ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ.

«ե) երիտասարդ նկարիչների և արվեստի մյուս վարպետների գործերի մշտական և ժամանակավոր ցուցադրությունների կազմակերպում, այդ թվում՝ անվճար ցուցադրությունների կազմակերպում՝ արվեստի և մշակութային այլ հաստատությունների ներկայացմամբ.»:

2. Սույն փոփոխությունը հանդիսանում է 29.12.2010թ. պետական ռեգիստրում գրանցված «Ժամանակակից արվեստի թանգարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպության անբաժանելի մասը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
«ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՐՎԵՍՏԻ ԹԱՆԳԱՐԱՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ

Ընթացիկ իրավիճակը, իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը, առկա խնդիրների առաջարկվող լուծումները.

«Ժամանակակից արվեստի թանգարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպության հիմնական խնդիրները և նպատակներն են՝ մշակութային գործունեության իրականացումը, թանգարանային և ցուցահանդեսային գործունեության իրականացումը, ժամանակակից հայ վարպետների արվեստի գործերի ցուցադրումը, նրանց մասին գրքերի և բուկլետների հրատարակումը, այդ արժեքների պահպանումը, թանգարանային արժեքների հավաքումը, պահպանումը, համալրումը, հավաքչական աշխատանքների իրականացումը, այդ նպատակով գիտական խմբերի ստեղծումը, դրանց գործուղումներիի կազմակերպումը, երիտասարդ նկարիչների և արվեստի մյուս վարպետների գործերի մշտական և ժամանակավոր ցուցադրությունների կազմակերպումը, գիտաժողովների և խորհրդակցությունների կազմակերպումը, միջազգային գիտական, հայրենական և արտասահմանյան երկրների թանգարանների հետ համագործակցությունը և ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ գործունեության իրականացումը:

Ինչպես վերոգրյալից պարզ է դառնում՝ «Ժամանակակից արվեստի թանգարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպության հիմնական խնդիրներից է նաև երիտասարդ նկարիչների և արվեստի մյուս վարպետների գործերի մշտական և ժամանակավոր ցուցադրությունների կազմակերպումը:

Կարևորելով և խրախուսելով երիտասարդ նկարիչների և արվեստի մյուս վարպետների գործունեությունը՝ Նախագծով առաջարկվում է հնարավորություն տալ «Ժամանակակից արվեստի թանգարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը կազմակերպել նաև երիտասարդ նկարիչների և արվեստի մյուս վարպետների գործերի անվճար ցուցադրություններ՝ արվեստի և մշակութային այլ հաստատությունների ներկայացմամբ /«Հայաստանի Նկարիչների միություն» և այլն/:

Ելնելով վերոգրյալից՝ ներկայացված Նախագծով առաջարկվում է փոփոխություններ կատարել «Ժամանակակից արվեստի թանգարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության մեջ՝ կազմակերպության գործունեության նպատակներում և խնդիրներում ավելացնելով նաև երիտասարդ նկարիչների և արվեստի մյուս վարպետների գործերի անվճար ցուցադրությունների կազմակերպումը՝ արվեստի և մշակութային այլ հաստատությունների ներկայացմամբ:

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ»
ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ **ՆՈՒԱՐԴ ՎԱՐԴԱՆՅԱՆ**